Վ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՐԿՈՒ ԱՆՏԻՊ ՏԱՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒՑ

Հայ միջնադարյան պոեզիայի մի յուրօրինակ դրսևորումն է Հովհաննես Թլկուրանցու բանաստեղծական ժառանգությունը: Լինելով միջնադարյան տաղաստացության ամենանշանավոր դեմքերից մեկը, շարունակելով նախորդների բանաստեղծական ավանդները, Թլկուրանցին շահեկանորեն առաջ է մղել միջնադարյան ճնարերգությունը՝ ստեղծելով թեթև ու թարմ, ինքնատիպ ու գունագեղ մի պոեզիա, որն ակնառու կերպով տարբերվում է իրենից առաջ և հետո եղած պոեզիայից:

Հարուստ է Թլկուրանցու բանաստեղծական ժառանգությունը, հարուստ և բազմազան նաև թեմատիկայի առումով, շոշափած խնդիրներով: Բայց Թլկուրանցին ամենից առաջ սիրո բանաստեղծ է: Նրա սիրո երգերն աչքի են ընկնում կանացի գեղեցկության ընկալման կենդանի պատկերներով: Նա երգում է սիրո ուրախությունը, և այդ երգը զգացմունքային է ու վարակիչ: Թլկուրանցին մի սիրավառ անհատականություն է՝ ամբողջությամբ բռնված սիրո անհանգչելի կրակով: Սերն աստվածային շնորհ համարող բանաստեղծը սիրապաշտ է նույնիսկ դառն ու ցավալի սիրո հանդեպ: Անգամ սիրո ցավն ու տառապանքը երգելիս բանաստեղծը չի կորցնում իր լավատեսությունը՝ աշխարհն ընկալելու իր ըմբռնումը: Իր սիրերգերն ունեն զգացմունքի խորություն և զմայլելի անմիջականություն: Թլկուրանցին, Կոստանդին Երզնկացուց հետո, հայ սիրերգությունը հարստացրեց այնպիսի արժանիքներով, որոնք ձեռք են բերել համաշխարհային հնչեղություն:

Գիտական հետաքրքրությունը Թլկուրանցու պոեզիայի նկատմամբ սկսվեց անցյալ դարավերջից, երբ Կարապետ Կոստանյանցը 1892 թ. հրատարակեց «Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը» փոքրիկ գրքույկը՝ նկատելիորեն հարստացնելով այն տաղաշարքը (թվով 16 տաղ), որ տեղ է գտել հայոց առաջին տպագիր տաղարանում (1513 թ.): Թլկուրանցու տաղերի հրատարակման ուղղությամբ բավականին գործ է կատարել նաև Զոպանյանը: 1958 թ. Երուսաղեմում Մովսեսը (Նորայր եպս. Պողարյան) հրատարակեց Թլկուրանցու «Տաղագիրք»-ը, որը տաղերի հրատարակման առումով ամենահաջողվածն է: Այստեղ տեղ են գտել Թլկուրանցու մի շարք անտիպ տաղեր, ինչպես նաև հրեք գանձ: 1960 թ. Էմ. Պիվազյանը հրատարակեց «Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր» աշխատությունը, որը շահեկան բանասիրական ուսումնասիրություն է, սակայն տաղերի ամբողջական հրատարակությունը չէ:

1957 թ. «Սիոն»-ի համարներում Լ. Մինասյանը հրատարակեց ևս չորս տաղ, որոնք գտել էր Սպահանի շրջանի Խոյգան գյուղի բնակիչ Արմենակ Տեր-Հովհաննիսյանի մոտ պահպանված «Տաղարան»-ում:

Այսպիսով, Թլկուրանցու ժառանգության հրատարակումը բավականին տևական ընթացք ունի, սակայն, ինչպես 1931 թ. Զոպանյանն է գրել, կարող են

ասել, որ «Թլկուրանցիի գործերուն ամբողջական հրատարակություն մը դեռ չունինք, և ատիկա պակաս մըն է, որ պետք է լրացվի»[1]:

Մաշտոցյան Մատենադարանի թիվ 10208 ձեռագրում (ժամ. 17-րդ դար) պահպանվել է Թլկուրանցու սիրո անհայտ մի տաղը[2]: Ձեռագրում այն հաջորդում է Թլկուրանցու «Հազար ուսուք է քեզ ծառայ...» սկսվածքով տաղին (էջ 145ա-բ) և նախորդում նույնպես Թլկուրանցու «Հանցգուն այլ ո՞վ տեսեր զմրուք» սկսվածքով տաղին (էջ 146բ): Տաղի խորագիրն է՝ «Նորին Յովանիսի է տաղս», որն ինքնին հաստատում է տաղի Թլկուրանցուն պատկանելը: Տաղը հոդում է «Այվանէսի» ծայրակապը: Ստորև մեջ ենք բերում տաղն ամբողջությամբ, ըստ թիվ 10208 ձեռագրի:

ՆՈՐԻՆ ՅՈՎԱՆԻՍԻ Է ՏԱՂՍ

Այսօր տեսայ պատկերմ աղվոր՝
կրակ ելից ու զիս այրեց.
կամար ուներ և համաւոր,
գաղտ նայելով՝ զհոգիս հանեց:

5 Յորժամ տեսայ զինք ի կանգնած՝
զէտ լուսընկա էր բոլորած.
աչերն էր զէտ կանթեղ վառած,
եղայ ես խև, խելքս գնաց:

Վարդ անթառամ էր նա գունով,
10 ոէհան կանանչ էր տերևով,
արեգական նման լուսով,
զինչ վարդենի բացուած վարդով:

Արաւ զիս խև և անպիտան,
չմնաց յիս միտք և զգայարան.
15 աշխարհս ամէնն ուրախանան՝
ես կորուսի զիմ ըրահան[4]:

Նմանիս դու ի բարձր բերդ,
շրթներտ գունով է վարդի թերթ,
ակ մարգարիտ և ոսկոյ շերտ
20 զիս խև արիր պարըսպով բերդ:

Նախշ երես հանց ձեռքտ ի հինան,
զէտ երկնից աստեղաց նման,
երբ որ տեսայ զքեզ կանգման,
այլ չի մնաց վերաս ֆէրման[3]:

25 Է՞ր չես հայիս դու դէպ ի յիս,
բոց վառեցիր ի մէջ սրտիս.
մէկ մի խօսէ՛, խնդա՛, հոգի՛ս,
որ քաղցը ծայնըտ գայ ի յիս:

Սերըտ մրտաւ ի մէջ սրտիս,
30 Շուտով տէրման արա տէրտիս,
կամ արեկ ա՛ռ, կամ եկո՛ յիս,
թէ չէ մեռայ, քակտաւ հոգիս:

Ի յարարչէն փառաւորիս,
ուրախ կենաս այսմ աշխարհիս.
35 չի մոռանաս զէմ դու այլ զիս՝
խև Յովհաննէս անպէտ հոգիս:

Մաշտոցյան Մատենադարանի թիվ 3595 ձեռագրում (էջ 88-93) տեղ է գտել Թլկուրանցու «Թագաւորիտ միշտ անվաղնան» սկսվածքով տաղը, որը

---

[1] «Անահիտ» հանդես, 1931, թիվ 5-6, էջ 2:

[2] Տե՛ս «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու), Ե., 1971, էջ 97-98:

[3] Ձեռագրում՝ ֆէրմանն:

[4] Ձեռագրում՝ ըրահանն:

Պիվազյանը եիշատակել է Թլկուրանցու ստեղծագործության ցանկում՝ սխալմամբ գանձ համարելով[5], սակայն չի հրատարակել: Ինչպես հայտնի է, գանձը պիտի ունենա ծայրակապ, որն այստեղ բացակայում է: Գանձին բնորոշ են նաև «Աղաչեմք» կրկնակը, «Ու ևս...», «Զանձինս...» և վերջում՝ «Ողորմեա՛յ» պարտադիր ձևերը, որոնցից ևս հիշյալ բանաստեղծությունը զուրկ է: Մինչդեռ այն ունի «Կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ» կրկնակը, որը երգի բոլոր 51 տների վերջին տողն է կազմում: Այս երկու փաստը բավական է ասելու, որ «Թագաւորիտ միշտ անվաղնան»-ը գանձ չէ, մանավանդ Թլկուրանցու՝ մեզ հայտնի գանձերի հետ բաղդատումը ևս հիմք է տալիս այդպես մտածելու:

Այս տաղն ավելի շատ շփման եզրեր ունի Մովսեսի հրատարակած «Զքեզ, Աստուած, խոստովանիմ» սկսվածքով տաղի հետ[6], որը աղերսանքի փայլուն նմուշ է. Նարեկացու «Մատեանին» հարազատ թլկուրանցիական ելևէջում: «Թագաւորիտ միշտ անվաղնան»-ը տաղ է, տաղի «Աղերսանք» կոչված տեսակը[7]:

Բանի որ մինչև այժմ տաղն անտիպ է, մենք նպատակահարմար գտանք այն հրատարակել՝ ըստ 3595 ձեռագրի.

Թագաւորիտ միշտ անվաղնան
մատուցանեմք աղերս հայցման
Երրորդութեամբ աստուածական.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

5 Եղէ ես տուն առանց հիման,
յորժամ հեղեղքն վտակեցան,
պարիսպն անկեալ կործանեցան.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

10 Ես ունէի յոլով դեկան,
շատ մարգարիտ խիստ
պատուական,
սատանայ զինքն[9] արար թաղթան.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

15 Նմանեցայ անառակին՝
վատնեալ զգանձս[10] հայրենին,
մեղայ ասեմ քեզ հայր յերկին.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Կարօտացայ[8] պատմուճանաց,
պիտոյ եղև կօշիկ ոտաց՝
կոխել ըզգլուխ օձից, կարնաց.
20 կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Զիս նորոգեա՛ փառօքն հին
և առաւել քան զոր էին՝
տալով ձեռացս զմատանին.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

25 Զդրամ կնոջն եմ կորուսեալ,
վառէ նրագ և ած աւել,
քո ծառայիս գիտ ըզպատկեր.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Հովիւ հովուաց, բացող կուրաց,
30 որ ոչ գարշիս յոլով մեղաց,
ես քո ոչխարն եմ կորուսած,
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

---

5 Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխ. Էմ. Պիվազյանի, Եր., 1960, էջ 84–85:

6 Հովհաննես Թլկուրանցի, Տաղագիրք, Երուսաղեմ, 1958, էջ 24–27:

7 «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», Եր., 1984, էջ 202–203:

8 Ձեռագրում՝ կառաւտացայ: Ձեռագրում բաղաձայնից առաջ հանդիպող աւ հնչյունակապակցությունը ներկայացնում ենք օ տառով:

9 Ձեռագրում՝ զենքն:

10 Ձեռագրում՝ զգանձս:

Տէր իմ Հիսուս, Հացդդ կենաց,
զիմ բժշկեա զվէրս մեղաց.
35 շունչ կերակրին ի փըշրանաց.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Դու բարեկամ մաքսաւորաց,
դեղ ընդունող մեղաւորաց.
զիմ պատնառեա զգիր յանցանաց
40 կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Քեզ պաղատիմ՝ Տէր, զիս կեցո,
ինձ մի՛ ազդել զձայն երթալոյ,
զօրինեալ եկայքըն լրսելոյ.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

45 Ի հարսանիսն եմ մեծարուել
և թուխ հանդերձ եմ զգեցել,
զանիւք բազմօք եմ արտաքսել.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Ես ի կոչունս եմ հրաւիրել
50 և յառաջին բարձին բազմել,
զերամանս անդ եմ մոռացել.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Զկաթուանաս ապարանաց
և ոչ յարկից թագաւորաց,
55 միայն բնակիս առ խոնարհաց.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Վաղվաղակի վառեալ բուսայ[15],
ի մէջ փըշոց անկեալ հեղձայ,
իբր զծաղիկ թառամեցայ.
60 կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Ընդ առաւօտս բողբոջեցայ,
ի հասարակն զուարճացայ,
ընդ երեկոյս ցամաքեցայ.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

65 Հազարամեայ զիս ստանայի,
տէր աշխարհաց զիս կարծէի,
աւուրքս անցաւ զերթ հովանի.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Հրամայեցաւ ինձ անտեսել,
70 որբոց և այրեաց սպասաւորել[11],
զինչս աղքատացն եմ գողացել.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Տերդ ինձ քանքար տվեր,
ամանաք, թէ շահեսցեր
75 բազում արծաթ ես ծրարեր[12].
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Հրամայեցեր լինել արքուն
և զգուշանալ տունդդ[13] գողուն,
ես հեղգացայ ու եղէ ի քուն.
80 կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Պատուիրեցեր յաղօթս կալ,
ամենևին մի ծանծրանալ,
արքայութեան ակն ունենալ[14].
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

85 Նմանեցայ ես շիրիմաց
և բռելոց գերեզմանաց,
մի տալ ինձ զվայն կեղծաւորաց.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Ոչ պահեցի զմաղաքս անձին,
90 մարտեաւ ընդ իս պեղծ թշնամին,
յափշտակեաց զիմ կարասին.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

Ես վառեցի հոգոյս ճրագ,
եթէ մարմնոյս լիցի ճարակ.
95 պեղծ դևն եղև ինձ հակառակ.
կամ և ասեմ՝ Տէր, ողորմեա՝ մեղայ:

---

11 Ձեռագրում՝ սպասորել:

12 Ձեռագրում՝ ծրարեցեի կորդ երկաթ: Ենթադրում եմ, որ 107 տողի ազդեցությամբ է վրիպակը:

13 Ձեռագրում՝ տ՚ենդդ:

14 Ձեռագրում՝ ունելալ:

15 Ձեռագրում՝ բուսաց:

Զաշտարակս բըլուռեցեալ
կանկնեա՛ շնորհօք զանազանեալ
ի դէմ վիմացդ հաստատեալ.
100 կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Թէ հայեսցիս գթով քոյին,
բեռինցի մեղացս թեթևասցին.
քաղցրը լծովդ աստուածային.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

105Գտայ ես գող արարողին՝
թաղեալ գտաղանդ պատուիրանին
ի կորդ երկիր մեղասիրին.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Ըստ տեսողացն Իսրայելի
110 որդն եմ և ոչ մարդ կենդանի,
արեամարեանք ամենայնի.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Ի չորս տարերց զիս կազմեցեր
և յանէից գոյացուցեր,
115 ընդ յիմար կուսիցն մի
արտաքսեր.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Գանձ և ոսկի եմ ժողովեալ,
ողորմութեան չեմ զգուշացեալ,
ըզփեգենայն եմ բաժանեալ.
120 կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Ես դնէի բարձր գտակ,
յառաջէի ի երապարակ,
շատ գործէի ոճիր 'ւ[17] առակ.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

125 Ես հագնէի նախ[18] և դիպակ
և զերնդկայինըն կապուտակ,
բայց աղքատացն ի հակառակ.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Ես զգենուի ի սպիտակ ատլաս,
130 պաճուճէի միշտ ի կերպաս,
հիվանդաց տեսըն գտայ պակաս.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Տէրն ինձ երեսն տասըն մընաս՝
գործեա սոքոք, բայց ոչ գողանաս
135 թէ չէ, զրկես ու օտարանաս.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Եղուկ է ինձ բիւրք ընդ բիւրին,
զի կաղք մտցեն յարքայութիւն,
ես մնամ տրտում և լալագին.
140 կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Թէ կշռեսցես զմեղս իմ անձին,
քան զաւազ[16] ծանր է և ստորին,
որպէս ասէ տեսողն հին.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

145 Ո՛վ եղկելի ծառայ մոլոր,
ստացիր հաւատ փոքր ու բոլոր,
զի մի ընկղմիս ի գուբրն խոր.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Ահեղ գոչէ փըրկիչն յառ իս՝
150 Ցորժամ ի մեղքն հաստատիս,
խըլեա ու ընկեա, որ չկորնչիս.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Թէ ունէի քիչ մի հավատ,
որ է գըրեալ մանանխի հատ,
155 ես փոխէի զլերինս յընդհատ.
կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

Ոչ ոք կարէ լինել արդար,
վասն զի չէ ունեմք հնար,
թէ ոչ կամիս դու, բարերար.
160 կամ և ասեմ՝ Տէր, քեզ մեղայ:

---

16 Անընթեռնելի է: Նայի մարգարեի խոսքն է ակնարկում: Հետևելով դրան՝ վերականգնել եմք զաւազ:

17 Ձեռագրում՝ ու

18 Բառը թերևս պետք է եղած լինի նախշ:

Ի քէն հայցեմք, հայրդ գթած,
մո՛յծ առ որդիտ քո ողորմած՝
թև փըրկեցայց ի փորձանաց.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

165 Երանի՛ է աղքատաց՝
ըստ անընչից և չքաւորաց,
զի հաւասար են հրեշտակաց.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Գովելի է սգաւորաց՝
170 որ ոչ խընդեն ըզփառս անձանց,
այլ միշտ հոգան վասն
յանցանաց.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Ուրախութիւն լիցի հեզոց.
զի հավասար են արդարոց
175 և ցընծացեն ընդ զվարթնոց,
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Տերըդ տացէ հաց քաղցելոց.
որք չըյդփացան ի կերակրոց,
այլ շիջուցին զմեղացն բոց.
180 կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Մի՛ մտաներ ի դատաստան
ընդ ծառայիս քո անպիտան,
զի գըտանիմ սուտ և անբան.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

185 Ես՝ Յովանէս թըշուառական,
հոգով մեռեալ և անարժան,
հեղձեալ ի փուշս աշխարհական.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Տէր, եթե զիմ շրթունս բանաս,
190 բերան իմ թեզ պատմէ զքանս
և կողկողէ զրագում մեղանս.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Անձն իմ, ընդէ՞ր դու վշտանաս
և յօրինացըն հեռանաս,
195 յիշեա՛ զՔրիստոս և զուարճանաս.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Անձն իմ, ընդէ՞ր դու վշտանաս
և յօրինացըն հեռանաս.
195 յիշեա՛ զՔրիստոս և զուարճանաս.
կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Եթէ դու այս կեանքս հանգեար,
Անդէն տրտում կենաս 'ւ[19] օտար,
բայց քո չարեացն արա վնար.
200 կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

Ցորժամ մեղաց դուրըն գտար
և զանցավորըս ուրացար,
դարձեալ յիշեա զՔրիստոս արդար.
204 կամ և ասեմ՝ Տէր, թեզ մեղայ:

---

19 Ձեռագրում՝ ու: